

46. ԽԱՆՈՅՈՒ ՅԷՐՔ ПЕСНЯ МАСЛОБОЙКИ

♩ = 60



Տիկ զար - կեմ,

եղ խա - նեմ,



1) սա-րակ - տի-րոն

ճաշ ա - նեմ:

2) Մեր ոխ - չար



զա - տու ի,

բե - րա - տեղ

մո - տու ի:

47. ԽԸՆՈՅՈՒ ՅԵՐԲ
(տարրերակ)

ПЕСНЯ МАСЛОБОЙКИ
(вариант)

♩=66

Մեր ծը-ծուն
նրխ - շուն ի,

1)

ր - թը մա-քու
մա - ծուն ի:

Տիկ գար - կեմ,
յեղ խա - նեմ,

սա-րակ - տի-րուն
ճաշ ա - նեմ,

տիկ գար - կեմ,
յեղ խա - նեմ,

սա-րակ - տի-րուն
ճաշ ա - նեմ:

♩=69

Գըմի, հա ցըմի գար - կեմ, նու - կիմ յեղ խա - նեմ,

ցըմի, հա ցըմի գար-կեմ,
մեր տուն շէն ա - նեմ:

ԽԸՆՈՑՈՒ ՅԵՐՔ

Տիկ գաւրկեմ, յէղ խանիմ,
Սաւրանկտիրոն ճաշ անիմ:
Մեր ոչխար գաւտու ի,
Բերանտեղ մոտու ի:
Մեր տիկ շատ ծանդըր ի,
Խարիր մաքյու կաթ ի:
Յըմփի, հայ ցըմփի կըգաւրկեմ,
Նուկիմ յէղ կըխանեմ,
Մեր ոչխար գյօ կըկյսի,
Պեռնով յէղ մի կըտա:

ԽԸՆՈՑՈՒ ՅԵՐՔ

Մեր ձրձում նըխշուն ի,
Յոթը մաքյու մածուն ի:
Տիկ գաւրկեմ, յէղ խանեմ,
Սաւրանկտիրուն ճաշ անեմ:

Մեր ոչխար գաւտու ի,
Բերանտեղ մոտու ի:
Տիկ գաւրկեմ, յէղ խանեմ,
Սաւրանկտիրուն ճաշ անեմ:

Մեր ոչխար գյօ կըկյսի,
Պեռնով յէղ մի կըտա:
Տիկ գաւրկեմ, յէղ խանեմ,
Սաւրանկտիրուն ճաշ անեմ:

Յըմփի, հա ցըմփի գաւրկեմ,
Նուկիմ յէղ խանեմ,
Յըմփի, հա ցըմփի գաւրկեմ,
Մեր տուն շէն անեմ: